



**Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
հաշվիչ հանձնաժողովի
(ընդհանուր ժողովի)**

ՈՐՈՇՈՒՄ N Ն-1

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ ընտրելու մասին

09.09.2017թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) հաշվիչ հանձնաժողովը,

հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 9.1 հոդվածի և կանոնադրության 7.11, 15.25 կետի 1-ին ենթակետի, 15.28, 15.30, 15.33 և 17.2 կետերի պահանջները, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2013 թվականի փետրվարի 22-ի № 5/1-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքների ամփոփման կարգի» 33-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները,

հաշվի առնելով «Պալատի նախագահի ընտրություն» օրակարգային հարցով ՀՀ փաստաբանների պալատի 09.09.2017թ. ընդհանուր ժողովի արդյունքների ամփոփման մասին Պալատի հաշվիչ հանձնաժողովի թիվ 2-Ն արձանագրությունը,

որոշեց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից՝ չորս տարի ժամկետով ՀՀ փաստաբանների պալատի նախագահ ընտրված համարել **փաստաբան Արա Գազիկի Զոհրաբյանին՝** քվեաթերթիկներ ստացած ընդհանուրը 1087 (մեկ հազար ութսունյոթ) փաստաբանների 1002 (մեկ հազար երկու) «Կողմ» ձայներով (92.1%):

2. Սահմանել, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի լիազորությունները սկսվում են 2017 թվականի հոկտեմբերի 4-ից:

3. Սահմանել, որ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված սույն որոշման հրապարակման պահից:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝

Ապետնակ Պողոսյան

Հաշվիչ հանձնաժողովի քարտուղար՝

Մարինե Ֆարմանյան

Անդամներ՝

Աշոտ Խլոյան

Արսեն Հարությունյան

Զարուհի Հայրապետյան

Տիգրան Սարուխանյան

Աղավնի Մադոյան

Մարիաննա Մխիթարյան

Տիգրան Հայրապետյան